

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՀԱՆՊԻՊՈՒՄՆԵՐ

Քառասունհինգամեայ շրջանին Միաբանութեանս եւ իր արժանաւոր Գլխուն մեծապէս պատուարներ են եւ յիշատակելի պատկերներ եկեղեցական ու քաղաքական աշխատութեան ղեկավարը որ Ս. Ղազար այցելեցին, քաջալերելով եւ օրհնելով Մեծն Մխիթարի գործը:

Պարծանքով պիտի յիշենք նախ Ծիր. Եւզինէոս Թիսսերան, որ երկար տարիներ վարելով Արեւելեան Ս. Ժողովը, միշտ ցոյց տուաւ յատուկ սէր եւ խնամք մեր Միաբանութեան իր զրական, քաղաքական եւ կրթական գործին: Առաջին անգամ եկաւ 1936ին որպէս Պապական ներկայացուցիչ Ս. Ռ. Վարժապետի յորհրդանիւն, շարունակելով յետոյ միշտ իր այցելութիւնները եւ միշտ խրախուսելով մեր զրական գործը:

Նոյապէս սիրալիր եւ քաջալերական եղան վենետիկոյ Ամեն. Պատրիարքներուն բարեկամական ու մտերմական այցելութիւնները, այսպէս Պատրիարք Ատէոտաթոյ Փիաքցայի (1936), Քարլոյ Ակոսթիւնի, Անճելոյ ձիւղեփփէ Ռոնքալլիի մը տերիմ սէրն ու ստէպ այցելութիւնները, ինչպէս վերջինին՝ Ծիր. ձիւղաննի Ռուրպանի:

Ազգայիններու կարգին յիշելի են աշխարհահռչակ բեմագրիչ Ռ. Մամուլեան (1937) Շահխաթունի եւ շատեր:

Վերջին աղետաւոր պատերազմի զինադադարին որպէս խաղաղութեան հրեշտակ իր հայրենի սիրով մեզի կը բերէր իր օրհնութիւնն ու քաջալերը Հոգեւոր Տէր Գր. Պետրոս ԺԵ. Աղաճանեան, բաշխելով նաեւ իր հայրենի մխիթարութիւնն եւ



Վենետիկոյ Ամեն. Ծիր. Պատր. Ռոնքալլի (այժմ Ս. Պապ) Ս. Ղազար այցելութեան պահուն: (19 Յունիս 1953)



Ն. Վ. Քարտիմալ Ե. Թիսսերան Ս. Ղազար կ'այցելէ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի յորհրդանիւն առիթով - 15 Օգոստոս 1936

օրհնութիւնը տարագիր Հայութեան որ ապրեցաւ հինգ տարի Ս. Ղազարու հովանիին ներքեւ:


Բացառիկ պատիւ էր մեզի եւ մեր տարեգրութեանց ոսկեղէն էջերուն մէջ արձանագրելի՝ այցը իտալական նորածին Հանրապետութեան Առաջին Նախագահին՝ ձիւղեփփէ Էյնաուտի (1948), ինչպէս տարի մը յետոյ Իտալիոյ Ներքին Գործոց Նախարարին՝ Մարիոյ Շելպայինը իր աղանիւնով հետ (1949):

Իտալիոյ պետական անձերէն ստէպ մեզ պատուած են երեսփոխաններ՝ Կաթթոյ,

Լիզիէր եւ ուրիշներ, ինչպէս Ծերակուտական ձիւղաննի Փոնթի Ռախիս մտերիմ բարեկամը:


Բացի սիրալիր յարաբերութիւններէն քաղաքիա ծրանա. Հիւպատոսներու, բացառիկ հաճոյքով ողջունեցինք Ժիւստէն Կոտար ծրանա. նախկին Նախարարը որ իր Պետութեան կողմէ յատուկ պաշտօնով իր պար պնդելու կուրծքը մեր Ընդհ. Արկու դար պնդելու կուրծքը մեր Ընդհ. Արկու Պատուոյ Լէգէոնի չքանչանով բաժնի Պատուոյ Լէգէոնի պատուէր իր ներ- (1950), ինչպէս մեզ կը պատուէր իր ներկայութեամբ Կատոն Մոններվիլ ծրանա. Ծերակոյտի Նախարարը (1952):





Վեհ. վազգէն Ա. Կաթողիկոս
Ս. Ղազար այցելութեան պահուն
(26 Մարտ 1956)


Պէյրուքի մէջ տեսակցութիւն
Վեհ. Գաթեգին Կաթողիկոսի եւ
Գերպ. Արքաշոր (12 Մայիս 1950)



բարեւ լուրերը կը բերեն մեզի, ինչպէս
Գէորգ Աբով (1946), Ակադ. Փրոֆ. Գ.
Դաւթեան, Փրոֆ. Ս. Մերկէլեան եւ ու-
րէնքը:

Այս զրուակին փառաւոր էջը թող կազ-
մէ յիշատակը Հոգեւոր Տիրոջ Հայրապե-
տական մեծ ճանաւորին զոր մատուց
Սիրտեան մատրան մէջ է Վատիկան,

Կաթողիկէ Եկեղեցւոյ բարձր կղերին
եւ նոյն ինքն Ս. Պապին ներկայութեան,
յատուկ մասնակցութեամբ Միւթթարեան
Միաբանութեան աշակերտութեան, Հայ-
րերուն եւ Ընդհ. Արքային՝ երբ եկեղե-
ցական ու զինուորական Յանձնախումբ
մը Ս. Ղազարէն Վատիկան փոխադրեց
սուրբ պատարագին համար զործածուե-



Գերպ. Արքաշորը Միաբանութեան Կաթողին անդամ եւ Պատուոյ Նախագահ կը հռչակէ
Հոգեւոր Տէր Գր. Պետրոս Ժե. Ազաւանեան (Հոռ, 15 Մարտ 1946)

լիք ամենաչքեղ սպանները, որով փայլե-
ցան իրենց բովանդակ շուքով հայ ծէսն եւ
նորընտիր հայ Ծիրանաւորը:
Այդ առիթով էր որ, երբ Հոռի կղերն
ու եկեղեցական Հաստատութիւնները
կարծես իրարու հետ կը մրցէին պատուե-
լու համար հայ ազգին մեծ զաւակը յան-
ձին Գրեգոր Պետրոս Ժե. Ծիրանաւոր Պա-
տրիարքին ահադեմական չքեղ հանդէս-
ներով եւ նոյն ինքն իտալական արքունի-
քը իր կարգին բացառիկ ընդունելութիւն
սարքելով, եւ Լեւոնեան Քահ. վարժարա-
նին մէջ տեղի կ'ունենային ազգային դա-
շութի տաք շրջանակին մէջ խանդավառ

ցոյցեր, Հոռի մեր Միւթթարեան Ուսա-
նողարանին մէջ ալ ակադեմական չքեղ
հանդէս մը կը սարքուէր ի պատիւ նոյն
Գրեգորեանի Հոգեւոր Տիրոջ՝ ի ներկայու-
թեան Հայ Կաթ. կղերին, ազգայիններու,
Լեւոնեան վարժարանի Տեսչութեան եւ
աշակերտութեան. եւ իրրեւ յարգանքի
պատիւ՝ Ուխտիւ Ընդհանրական Արքաշո-
րը որպէս նախագահ Ս. Ղազարու Հայ-
րեան ճեմարանին, զինքը կ'անուանէր
Անդամ եւ Պատուոյ Նախագահ նոյն Միւթ-
թարեան ճեմարանին, բոլորին հրճուան-
քին եւ բարեմաղթութեանց մէջ: